

ՄԻՋՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ*

Փախյան Ա.Ա., Աղաջանյան Ս.Ս. Գրիգորյան Կ.Հ., Ղալայան Տ.Ա.†

Ամփոփում: Տնտեսական գործունեության ասպարեզ թվային տեխնոլոգիաների սրընթաց ներթափանցմամբ մանրածախ անտրաշրջանառության զգալի մասը տեղափոխվել է առցանց հարթություն՝ դուրս գալով հարկային մարմինների վերահսկողության դաշտից և ավելացնելով տնտեսության ստվերային հատվածը: Այդուհանդերձ, թվային ապրանքներով և ծառայություններով էլեկտրոնային առևտուրը շատ երկրներում ենթակա է մաքսային և հարկային կարգավորման, թեև ավանդական հարկային վարչարարության շրջանակներում հաճախ դժվարություններ են առաջանում հարկման օբյեկտի, հարկման վայրի, հարկման բազայի որոշման և այլ խնդիրների շուրջ: Բազմաթիվ երկրներ փորձում են ինքնուրույն մշակել նման կարգավորման շրջանակներ, քանի դեռ չկան արդյունավետ կարգավորման միջազգային նորմեր:

Հոդվածի շրջանակներում ուսումնասիրության է ենթարկվել էլեկտրոնային առևտրի մաքսային և հարկային կարգավորման արտերկրյա (Եվրամիություն, Չինաստան, Հվ. Կորեա, Մինգապուր, ԵԱՏՄ երկրներ) փորձը՝ վերջինիս առավել ակնառու տարրերը ՀՀ-ում ներդնելու մտադրությամբ:

Բանալի բառեր. Միջառնամանային էլեկտրոնային առևտուր, հարկեր, մաքսատուրքեր, փոստային առաքանի, անմաքս ներմուծում, թույլատրելի սահմանաչափ:

JEL Classification: F10, F19, H27, H29, K33, K34, L81.

1. Ներածություն

Աշխարհի շատ երկրներում վերջին տարիներին նկատելի է դառնում

* Հոդվածը պատրաստվել է «ԱՄԲԵՐԴ» հետազոտական կենտրոնի՝ «Էլեկտրոնային առևտուր, հնարավոր ռիսկեր, կորուստներ և զարգացման հնարավորություններ» թեմայով հետազոտական դրամաշնորհային ծրագրի շրջանակում:

† Աննա Փախյան — ՀՊՏՀ Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ, ծրագրի ղեկավար, տ.գ.թ., e-mail: Մուսաննա Աղաջանյան — ՄՏՀ ասիստենտ, տ.գ.թ., Կարմեն Գրիգորյան — ՄՏՀ ասիստենտ, տ.գ.թ., Տիգրան Ղալայան — ՀՊՏՀ «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն» մասնագիտացման 1-ին կուրսի մագիստրոս,

սպառողների նշանակալի կախվածությունն էլեկտրոնային առևտրից, ինչը սպառնում է առաջացնել տնտեսությունների և շուկաների լուրջ կառուցվածքային վերափոխումներ: Միաժամանակ, էլեկտրոնային առևտրի աճող եկամուտներն առաջ են մղում դրա հարկման անհրաժեշտությունն ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում, քանզի էլեկտրոնային այլընտրանքների հաշվին ավանդական առևտրային գործարքների կրճատումը սպառնում է հանգեցնել բյուջեի հարկային եկամուտների շոշափելի կորուստների:

Էլեկտրոնային առևտուրը խարխուլում է միջազգային հարկային հայեցակարգը, որի համաձայն՝ հարկվող սուբյեկտ հանդիսացող ընկերությունները տարանջատվում են՝ ըստ ֆիզիկական ներկայության (UNCTAD, 2015): Այսինքն՝ ընկերության գործունեությունը հարկվում է այն երկրում, որտեղ վերջինս ունի ֆիզիկական ներկայություն (ռեզիդենտություն): Մինչդեռ համացանցի գլոբալ բնույթը խնդրահարույց է դարձնում էլեկտրոնային միջավայրում գործունեություն ծավալող ընկերությունների՝ այս կամ այն երկրում «ֆիզիկական ներկայության» փաստի արձանագրումը՝ անորոշության մատնելով դրանց նկատմամբ հարկային քաղաքականության վարումը: Արդյունքում, ի հայտ են գալիս մի շարք խնդիրներ՝ կապված էլեկտրոնային առևտրի ոչ ռեզիդենտ բիզնեսների հարկման երկրի որոշման, թվային ապրանքների դասակարգման, հարկ վճարողների բացահայտման, սպառման հարկերի հավաքագրման վայրի և ձևի որոշման, ինչպես նաև հարկադիր կատարման հետ:

2. Վերլուծություն

Ժամանակակից շուկայական հարաբերություններում, երբ արագորեն արմատավորվում են տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված բիզնես գործունեության տեսակները (էլեկտրոնային առևտուր, առցանց խանութներ և խաղատներ, առցանց տաքսի ծառայություններ և այլն), համացանցի տիրույթում գրանցվելու և գործարքներ իրականացնելու հանգամանքով պայմանավորված, դրանք, ըստ էության, դուրս են մնում ոչ միայն ՀՀ հարկային, մաքսային և վիճակագրական մարմինների, այլև նույնիսկ տվյալ սուբյեկտների պետական գրանցում իրականացնող պետական մարմինների վերահսկողությունից (Հարությունյան Վ.Լ. (2019), էջ 66)՝ անսահման հնարավորություններ ստեղծելով ստվերային տնտեսության ընդլայնման համար: Ակնհայտ է, որ էլեկտրոնային ձեռնարկատիրության տարածման հետ մեկտեղ ՀՀ-ում առաջ են գալիս

էլեկտրոնային առևտրի հաշվառման և հարկման մի շարք հիմնախնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն: Իսկ նմանօրինակ լուծումներ առաջին հերթին հարկ է փնտրել արտերկրյա առաջավոր փորձի ուսումնասիրության տիրույթում: Ուստի, այդ նպատակով դիտարկվել են միջսահմանային էլեկտրոնային առևտրի նկատմամբ մաքսային վարչարարության հիմնական սկզբունքներն ու մեխանիզմները ԵՄ-ում, ԵԱՏՄ-ում, Չինաստանում, Հարավային Կորեայում և Մինգապուրում:

ՀՀ-ում ներդրման հնարավորությունների դիտակետից էլեկտրոնային առևտրի հարկման **Եվրամիության** փորձը հատկապես արժեքավոր է ոլորտի իրավաօրենսդրական կարգավորվածության տեսանկյունից:

2014թ. Եվրոպական հանձնաժողովի հրապարակած թվային տնտեսության հարկման հիմնական սկզբունքների համաձայն՝ չպետք է լինեն հատուկ հարկային ռեժիմներ «թվային ընկերությունների համար», այլ պետք է կիրառվեն ընդհանուր կանոններ, միաժամանակ, ԵՄ ընդհանուր շուկայում գործող ՓՄՁ-ների համար հարկային արգելքներ չպետք է լինեն: Այդուհանդերձ, համանման հարկման սկզբունքներ կիրառելուց առաջ ՀՀ նախ և առաջ անհրաժեշտ է կարգավորել էլեկտրոնային միջավայրում գործունեություն ծավալող ընկերությունների և անհատների համապատասխան գրանցման և վիճակագրորեն հաշվառելիության հիմնահարցերը:

2015թ. հունվարին ԵՄ-ում ներդրվեց հեռահաղորդակցության, հեռարձակման և էլեկտրոնային ծառայությունների տրամադրման նոր կարգ: Օրենսդրության շրջանակներում կիրառվեց նպատակակետային սկզբունքը, որն ուղեկցվեց Mini One Stop Shop (MOSS)-ի ներդրմամբ: Այս սկզբունքի կիրառումը ենթադրում էր, որ եթե նախկինում ԱԱՀ-ն գանձվում էր ծառայություններ մատուցողի երկրում, ապա փոփոխությունից հետո պետք է վճարվի այդ ծառայությունները սպառողի երկրում: Միջսահմանային էլեկտրոնային առևտրի համատեքստում նախատեսվել է նվազեցնել վարչական ծախսերը՝ ԱԱՀ իրավական կարգավորման ոլորտում առկա տարբերությունների պատճառով: Այս ռազմավարության շրջանակներում նախատեսվել է ընդլայնել ԱԱՀ-ի էլեկտրոնային գրանցման և վճարման շրջանակները, ներդնել միասնական եվրոպական պարզեցված ընթացակարգ սկսնակ ընկերությունների համար ԱԱՀ-ից ազատելու նպատակով, և երրորդ երկրներից սպառողների համար փոքրածավալ ներմուծման

դեպքում գանձումների վերացում¹: Անհատ սպառողների կողմից փոքրածավալ ներմուծումների դեպքում հարկերի չկիրառման փորձառությունը, թերևս, արդեն իսկ կիրառվում է ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ԵԱՏՄ անդամ մյուս երկրներում:

ԵՄ որոշումների երկրորդ փաթեթն ընդունվել է 2017թ.-ին՝ Միասնական թվային շուկայի ձևավորման ռազմավարության շրջանակներում, այն կանոնակարգում է ԵՄ տարածքում ապրանքների և ծառայությունների հեռավար առևտուրը և կոչվում «ԱԱՀ-ի էլեկտրոնային առևտրի փաթեթ», վերջինիս դրույթները կկիրառվեն 2021թ. հուլիսի 1-ից:

Վերջինս բաղկացած էր Խորհրդի (ԵՄ) 2017/2455² հրահանգից, Խորհրդի կանոնակարգից (ԵՄ) 2017/2454³ և Խորհրդի կիրարկող (ԵՄ) 2017/2459⁴ կանոնակարգերից: 2019 թ.-ի նոյեմբերի 21-ին խորհուրդն ընդունեց ԱԱՀ-ի էլեկտրոնային առևտրի փաթեթի համար իրականացվող միջոցառումները, որոնք բաղկացած էին Խորհրդի (ԵՄ) 2019/1995 հրահանգից⁵ և Խորհրդի կիրարկող (ԵՄ) 2019/2026 կանոնակարգից⁶:

2020 թվականի փետրվարի 12-ին Հանձնաժողովն ընդունեց կիրարկող Կանոնակարգ (EU) 2020/194, որտեղ մանրամասն ներկայացում է ԱԱՀ մեխանիզմը One Stop Shop-ի շրջանակներում: Այս փաթեթի մշակումը նպատակ ուներ դյուրացնել միջսահմանային առևտուրը, պայքարել ԱԱՀ խարդախությունների դեմ և ԵՄ ընկերությունների համար ապահովել արդար մրցակցություն: Նոր դրույթները կանոնակարգում են «Mini One Stop Shop» ձևաչափի (MOSS)

¹ [Communication from the Commission to the European Parliament, The Council, The European Economic and Social Committee and the Committee of the Regions, A Digital Single Market Strategy for Europe](#)

² [Council Directive \(EU\) 2017/2455 of 5 December 2017 amending Directive 2006/112/EC and Directive 2009/132/EC as regards certain value added tax obligations for supplies of services and distance sales of goods](#)

³ [Council Regulation \(EU\) 2017/2454 of 5 December 2017 amending Regulation \(EU\) No 904/2010 on administrative cooperation and combating fraud in the field of value added tax](#)

⁴ [Council Implementing Regulation \(EU\) 2017/2459 of 5 December 2017 amending Implementing Regulation \(EU\) No 282/2011 laying down implementing measures for Directive 2006/112/EC on the common system of value added tax](#)

⁵ [Council Directive \(EU\) 2019/1995 of 21 November 2019 amending Directive 2006/112/EC as regards provisions relating to distance sales of goods and certain domestic supplies of goods /ST/8010/2019/INIT/](#)

⁶ [Council Implementing Regulation \(EU\) 2019/2026 of 21 November 2019 amending Implementing Regulation \(EU\) No 282/2011 as regards supplies of goods or services facilitated by electronic interfaces and the special schemes for taxable persons supplying services to non-taxable persons, making distance sales of goods and certain domestic supplies of goods /ST/8011/2019/INIT/](#)

կատարելագործումը և դրա շրջանակների ընդլայնումը՝ ներդնելով «One Stop Shop» (OSS) համակարգը, ԵՄ տարածքում և երրորդ երկրների հետ ապրանքների հեռավար վաճառքի կարգերը, Import One Stop Shop, ինչպես նաև VAT One Stop Shop return կառուցակարգերը: Վերջինիս որոշ տարրեր կարող են կիրառվել ԵԱՏՄ միասնական պատուհանի ընձեռած հնարավորությունների կատարելագործման նպատակով:

Աղյուսակ 1. ԱԱՀ-ի հաշվարկման շեմային ցուցանիշներն՝ ըստ առանձին երկրների (հուլիս 2019թ.)

Հեռավար վաճառքի դեպքում հատուկ սխեմայի կիրառման շեմը	Երկիրը (Եվրո)
Բելգիա	35000
Բուլղարիա	35791
Խորվաթիա	36501
Չեխիա	44744
Դանիա	37510
Գերմանիա	100000
Էստոնիա, Հունաստան, Իսպանիա, Ֆրանսիա, Իտալիա, Լատվիա, Լյուքսեմբուրգ, Վենգրիա, Մալտա, Նիդերլանդներ, Նիդերլանդներ, Սլովենիա, Ֆինլանդիա	10000
Իռլանդիա	41000
Կիպրոս	10251.61
Լիտվա	14000
Ավստրիա	11000
Լեհաստան	11785
Ռումանիա	7291
Սլովակիա	14000
Շվեդիա	8535
Միացյալ Թագավորություն	94741

Աղբյուր՝ European Commission, VAT Thresholds (1 July 2019), (See Article 34 of Directive 2006/112/EC, as amended),

2019թ. ԵՄ-ում կիրառվել է ԱԱՀ հաշվարկման երկու շեմ՝ միկրո-ձեռնարկատիրության և ՓՄՁ-ների համար: Առաջինը վերաբերում էր ԵՄ տարածքում հեռահաղորդակցության, հեռարձակման և էլեկտրոնային ծառայությունների միջսահմանային մատակարարումներին, որոնց շրջանառությունը կազմում էր 10.000 եվրո, որը գերազանցող

շրջանառության դեպքում գործում են անդամ երկրի ԱԱՀ-ի կանոնները: Երկրորդը վերաբերում էր 10.000 եվրոյից ավել շրջանառությանը, որի համար վաճառողը պետք է ներկայացնեք միայն մեկ փաստ «one piece of evidence (instead of two)»՝ հաճախորդի անդամ երկիրը նույնականացնելու համար: Ըստ էության, Եվրոպական հորինուրդը մշակում է համապատասխան մեխանիզմ, որի օգնությամբ ԱԱՀ-ով հարկվող առևտրային ընկերությունները, որոնք առևտուր են իրականացնում նաև Էլեկտրոնային եղանակով, այդ թվում՝ երկրի սահմաններից դուրս, հնարավորություն են ունենում պարզեցված կերպով հարկվել ԱԱՀ-ով, որը կվճարվի այն երկրին, որտեղ տեղակայված է գնորդը:

B2C վաճառքի սխեմայի դեպքում ԵՄ-ում ԱԱՀ վճարվում է՝ իրացման ծավալի շեմային ցուցանիշներից, որոնք տարբերվում են՝ ըստ անդամ երկրների (տե՛ս Աղյուսակ 1.):

2021թ-ից Էլեկտրոնային տիրույթների միջոցով, ինչպիսիք են՝ առևտրային հարթակները և վաճառք իրականացնող ընկերությունները, որոշ դեպքերում կհամարվեն ԱԱՀ վճարողներ, և, ըստ այդմ, նրանք կհավաքագրեն և կվճարեն ԱԱՀ: Էլեկտրոնային առևտրի ԱԱՀ փաթեթը կհեշտացնի միջսահմանային առևտուրը, պայքարն ԱԱՀ-ի հետ առնչվող խարդախությունների դեմ՝ ապահովելով ԵՄ բիզնեսների համար արդար մրցակցություն:

Ընդհանրացնելով ԵՄ-ում հարկային ոլորտի բարեփոխումները՝ առանձնացնենք դրա հիմնական բնորոշիչ գծերը.

1. **ԵՄ-ում ԱԱՀ միասնական հետ վերադարձ Էլեկտրոնային վաճառքների դեպքում:** Բարեփոխումները ներառում են հեռավար վաճառքի շեմային ցուցանիշների պարզեցված ընթացակարգեր: Սա ենթադրում է «One Stop Shop»-ի ներդրում՝ ԱԱՀ միասնական հետ վերադարձի սկզբունքով: Այս մոդելի կիրառման արդյունքում Էլեկտրոնային վաճառքով զբաղվողները կարող են փակել իրենց օտարերկրյա ԱԱՀ գրանցումները՝ փոխարենը լրացնելով եռամսյակային One Stop Shop իրենց հիմնադրման երկրի հարկային մարմնում: Ոչ ԵՄ վաճառողները ևս կարող են օգտվել One Stop Shop-ից՝ վաճառքներից մուծելով ԱԱՀ՝ ըստ ԵՄ երկրներում կիրառվող դրույքաչափերի:
2. **Ներմուծման ԱԱՀ-ից ազատման «հնարավորության» փոխարինում «Ներմուծում կանաչ գոտի» սխեմայի կիրառմամբ:** 2021 թ. հուլիսից ԵՄ ներմուծվող 22 եվրո արժողությամբ փոքր ծանրոցների համար ԱԱՀ-ից ազատումը հանվում է, քանզի ԱԱՀ-ից խուսափելու համար միտումնավոր թերհայտարարագրվում են ապրանքների ներմուծման արժեքները: Փոխարենը, եթե ծանրոցի արժեքը չի գերազանցում 150 եվրոն, ԱԱՀ-ն

պետք է զանձվի բեռների ուղարկման առևտրային կետում: Այս դեպքում ԱԱՀ պետք է հայտարարագրվի և վճարվի դիմումի միջոցով: Սա հնարավորություն կտա ապահովել առավել արդյունավետ «արագ հետևում» կամ «Կանաչ գոտի»՝ արագ և հեշտ մաքսագերծման համար:

Վերոնշյալ միջոցառումների շնորհիվ, Եվրամիությունը, փաստացիորեն փորձում է լուծել էլեկտրոնային առևտրի արժեքի միտումնավոր թերհայտարարագրման հետ կապված խնդիրները, որոնք, ըստ էության, հատուկ են նաև ՀՀ-ին: Սակայն, քանի դեռ ոլորտի կանոնակարգվածությունը երկրում գտնվում է սադմային վիճակում, իսկ էլեկտրոնային բիզնեսում ներգրավված տնտեսվարողների համար ստեղծված չեն պարտադիր գրանցման և վիճակագրական հաշվառման կառուցակարգեր, ԵՄ օրինակով հարկման փորձառության ներդրումը կարող է լրջագույնս սահմանափակել էլեկտրոնային առևտրի զարգացման հնարավորությունները ՀՀ-ում:

Էլեկտրոնային առևտուրը հարկային դաշտ բերելու համար Հայաստանին, թերևս, անհրաժեշտ է առավել կոշտ քաղաքականություն, ինչպիսին վարում է, օրինակ, **Չինաստանը**, որտեղ հարկային հաշվառման և գործող վարչարարության շրջանցմամբ էլեկտրոնային առևտրով զբաղվելը խստորեն դատապարտվում է՝ բացահայտված դեպքերի նկատմամբ տուգանքների կամ քրեական պատասխանատվության կիրառմամբ: Նույնիսկ հայտնի են դեպքեր, երբ ավիաընկերության ուղեկցորդուհին արտերկրից բերել է ապրանքներ և վաճառել իր սոցիալական էջերի միջոցով՝ արդյունքում տուգանվելով և հայտնվելով քանտում:

Չինաստանում 2019 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենքը վերաբերում է էլեկտրոնային առևտրի օպերատորներին, էլեկտրոնային առևտրի հարթակների օպերատորներին, ինչպիսին է Taobao-ն, էլեկտրոնային առևտրի հարթակներում վաճառողներին, սեփական կայքերի կամ այլ վեբ ծառայությունների միջոցով առևտրով զբաղվողներին, օր.՝ անհատները, որոնք կարող են վաճառել ապրանքներ այնպիսի սոցիալական ցանցերում, ինչպիսին է WeChat-ը: Նման մեխանիզմներով էլեկտրոնային առևտրի ծառայություն մատուցողը պետք է գրանցվի մաքսատանը և այլ ուղեկցող մարմիններում՝ գործարքի մասին տվյալների փոխանցման նպատակով:

Միջսահմանային էլեկտրոնային առևտրի մոդելով ներմուծման նկատմամբ կիրառելի են հետևյալ հարկերը՝ փոստային հարկ կամ, այսպես կոչված, «ծանրոցի հարկ» (Parsel tax or Postal tax) և բաղադրյալ հարկ (Composite Tax)՝ սահմանված համար:

• Ծանրոցի կամ փոստային հարկ

Այս հարկատեսակը վերաբերում է միայն Չինաստանի ռեզիդենտ հանդիսացող քաղաքացիների կողմից անձնական օգտագործման նպատակով միջսահմանային էլեկտրոնային առևտրով ձեռքբերված ապրանքներին: 2019 թվականի հունվարի 1-ից դրույքաչափերն ի սկզբանե սահմանվել են 15%⁷, 25%⁸ և 50%⁹, սակայն 2019 թ. ապրիլից փոստային հարկի դրույքաչափերը վերանայվել են. մասնավորապես՝ մեկ անուն ապրանք (համակարգիչ, սնունդ, խաղալիքներ կամ դեղորայք) ներառող փաթեթների փոստային հարկը 15%-ից կրճատվել է 13%, իսկ երկու անուն ապրանք (տեքստիլ արտադրանք, էլեկտրոնային սարքավորումներ)¹⁰ ներառող անհատական ծանրոցների փոստային հարկը սահմանվել է 20%՝ նախկին 25%-ի փոխարեն¹¹: Հաճախորդը ազատվում է փոստային հարկից, եթե հարկի գումարը փոքր է 50 յուանից (մոտ 3400 ՀՀ դրամ): Նման պայմաններով անհատն անմիջապես գնում է կատարում այնպիսի հարթակներից, ինչպիսին է Amazon US-ը: Ապրանքը ներմուծվում է, փոստային հարկը ֆիզիկական անձից գանձվում է անմիջապես մաքսատան փոստային բաժանմունքում՝ նախքան ծանրոցի փոխանցումը ստացողին: Փոստային հարկը հաշվարկվում է ներմուծվող ապրանքի մաքսային արժեքի (մանրածախ գնի, էլեկտրոնային առևտրի միջնորդի կողմից գանձվող փոխադրման և ապահովագրության ծախսերի հանրագումարի)

⁷ Փոստային հարկի 15% դրույքաչափը կիրառելի է հետևյալ ապրանքների նկատմամբ՝ մեդալոնային արտադրանք, սնունդ և խմիչքներ, հեռախոսներ և այլ փոքր էլեկտրոնային սարքեր, ձայնագրման սարքեր և թվային կրիչներ, ականջակալներ, համակարգիչներ և պահեստամասեր, կահավորանք, գրքեր, ամսագրեր, ուսումնական նյութեր, խաղեր, գրենական պիտույքներ:

⁸ Հարկի 25% դրույքաչափով են հարկվում հետևյալ ապրանքները՝ կոշիկներ, ոչ շքեղ ժամացույցներ և կից մասեր, ադամանդե զարդեր, անհատական խնամքի, մաշկի, մազերի խնամքի պարագաներ, դեղորայքներ, մաքրող միջոցներ, հագուստ, տեքստիլ պարագաներ, տնային տեքստիլ, կաշվե պարտաստի հագուստ և պարագաներ, պայուսակներ, ճամպուրակներ, էլեկտրական սարքեր և պահեստամասեր, տեսախցիկներ (ոչ թվային), ֆոտոխցիկների աքսեսուարներ, արվեստի հավաքածուներ, սպորտային ապրանքներ, հեծանիվներ և հեծանիվների պահեստամասեր:

⁹ Հարկի 50% դրույքաչափ է գործում հետևյալ ապրանքների համար՝ ալկոհոլ և ալկոհոլային խմիչքներ, ծխախոտ, շքեղ ժամացույցներ, շքեղ զարդեր (մարգարիտներ, ադամանդե քարեր), օժանելիք, հարդարաչուր, թանկարժեք կոսմետիկա (այդ թվում՝ ներարկվող կոսմետիկա), գոլֆի պարագաներ:

¹⁰ State Council Announces Cuts to Government Fees and Personal Postal Article Taxes, 17 April 2019 - <https://research.hktdc.com/en/article/MzA4NjYzOTA5>

¹¹ China Details Reductions to Personal Postal Articles Tax, 17 April 2019 - <https://research.hktdc.com/en/article/MzIyNTY3ODc0>

նկատմամբ՝ ադվալորային դրույքաչափով: Ապրանքների վերադարձի դեպքում հաճախորդը պետք է պահանջի գանձված հարկի վերադարձ՝ ապրանքը մաքսատնից բաց թողնվելուց 30 օրվա ընթացքում:

- Բաղադրյալ հարկ՝ մասնագիտացված միջսահմանային էլեկտրոնային առևտրի նկատմամբ (Composite Tax for Qualified Cross-border E-commerce) կամ այլ կերպ՝ Միջսահմանային էլեկտրոնային ներմուծման հարկը (Cross-Border e-Commerce import tax, կրճատ՝ CBEC):

Միջսահմանային էլեկտրոնային առևտրի CBEC հարկատեսակը կիրառելի է էլեկտրոնային առևտրային հարաբերությունների հետևյալ երկու մոդելների նկատմամբ.

1. ապրանքների գնում Չինաստանում գործող միջսահմանային էլեկտրոնային առևտրի ցանցում գրանցված վաճառողներից՝ տեղական էլեկտրոնային առևտրի հարթակներից (ինչպիսիք են՝ Tmall Global, JD Worldwide և այլն), որոնք կարող են կապակցված լինել արտասահմանյան էլեկտրոնային առևտրի հարթակներին,
2. էլեկտրոնային առևտրի գործարքի միջոցով անմիջապես արտասահմանյան վաճառողից ապրանքների գնում, որոնք առաքվում են միջնորդ փոխադրողի կողմից, որն իր հերթին կարող է տրամադրել երեք անհրաժեշտ փաստաթղթերը՝ առևտրային հաշիվ-ապրանքագիր, ավիաբեռնագիր (airway bill) ու վճարման ստացման անդորրագիր, և պատրաստ կլինի ներմուծման համար կրելու իրավական պատասխանատվություն:

Միջսահմանային էլեկտրոնային առևտուրը հարկվում է Չինաստանում ներկայումս ավանդական առևտրի նկատմամբ գործող ներմուծման մաքսային սակագների, ԱԱՀ-ի և սպառողական հարկի համապատասխան դրույքներով (Tsai, Yang, Huang, et al, 2017):

Տեղական առևտրային հարթակների միջոցով արտասահմանյան ապրանքների էլեկտրոնային առևտրի խթանման նպատակով, 2019 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած փոփոխություններով՝ անհատների կողմից նմանատիպ ներմուծումները, որոնց մաքսային արժեքը (CIF արժեքը) չի գերազանցում 5,000 յուանը (մոտ 340,000 ՀՀ դրամ), իսկ կուտակված գնումների տարեկան ընդհանուր գումարը չի գերազանցում 26,000 յուանի (մոտ 1,770,000 ՀՀ դրամ) սահմանաչափը¹², ազատվում են ներմուծման մաքսատուրքից և ենթակա են հարկման

¹² Նշված փոփոխություններն ամրագրված են 2019 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Էլեկտրոնային առևտրի մասին օրենքում», մինչ այդ մեկ գնման առավելագույն արժեքային սահմանաչափը եղել է 2000 յուան, որը նոր օրենքով դարձել է 5000: Բացի այդ, տարեկան ընդհանուր գնումների սահմանաչափը եղել է 20000 յուան՝ ներկայումս գործող 26000 յուանի փոխարեն:

ԱԱՀ-ի և սպառման հարկի գործող դրույքաչափի 70%-ի չափով (30%-ով նվազում են սպառման հարկը և ԱԱՀ-ն): Վերոնշյալ պայմաններին չհամապատասխանող ներմուծումները ենթակա են հարկման սահմանված կարգով՝ գործող բոլոր հարկերի դրույքաչափերի ամբողջ չափով: Միաժամանակ, արտոնյալ հարկային ռեժիմից կարող են օգտվել միայն այն ապրանքները, որոնք ընդգրկված են Չինաստանի ֆինանսների նախարարության կողմից սահմանված ցանկում¹³:

Միաժամանակ, B2B ձևաչափով էլեկտրոնային առևտրի գործարքի դեպքում կիրառվում են լիարժեք մաքսատուրք, սպառման հարկ և ԱԱՀ, եթե ներմուծվող ապրանքների ծագման երկրի նկատմամբ կիրառելի չէ արտոնյալ դրույքաչափ, որը կարող է սահմանված լինել ազատ առևտրի համաձայնագրով: Կիրառվում են մաքսային հայտարարագրման նորմալ ընթացակարգերը¹⁴: Ընդհանուր սահմանված կարգով և չափով են հարկվում նաև ուղղակի առաքմամբ, ինչպես, օրինակ, Չինաստանի փոստով կամ EMS (Express Mail Service) համակարգով ներմուծվող ապրանքները:

Միջսահմանային էլեկտրոնային մանրածախ առևտրային գործարքների մասով Չինաստանում հարկատու են հանդիսանում միջսահմանային էլեկտրոնային առևտրի միջոցով ապրանքներ ներմուծող անհատները, էլեկտրոնային հարթակները, էլեկտրոնային ձեռնարկությունները և լոգիստիկ կազմակերպությունները: Այսպիսով, որպես հարկատու սուբյեկտ սահմանելով էլեկտրոնային առևտրի գործարքներին մասնակից բոլոր կողմերին, Չինաստանն, ըստ էության, լուծել է ոլորտի նկատմամբ համակողմանի վերահսկողության սահմանման և միևնույն գործարքի վերաբերյալ տարբեր մասնակիցներից լիարժեք տեղեկատվության հավաքագրման խնդիրը: Մեր կարծիքով, հենց այս քայլերից էլ պետք է Հայաստանում սկսել էլեկտրոնային առևտրի կարգավորման գործընթացը:

2019 թվականի ապրիլի 8-ի փոփոխություններով միջսահմանային էլեկտրոնային առևտուրը ենթարկվում է հարկային դրույքաչափերի հերթական նվազեցմանը.

- Միջսահմանային էլեկտրոնային առևտրի համար, համապարփակ հարկը (comprehensive tax) 11,2%-ից նվազեցվել է 9,1%-ի՝ հասարակ կոսմետիկայի համար և 25,53%-ից 23,05%՝ բարձրակարգ կոսմետիկայի համար: Ընդ որում, բարձրակարգ է համարվում այն կոսմետիկան, որի մեծածախ

¹³ [China Import Customs Duty: Tax Overview](#)

¹⁴ [China Adopts E-Commerce Law – Its Tax Implications // Mazars, China Tax Newsletter - May 2019, Pp. 1-6.](#)

ներմուծման գինը հարկերի վճարումից հետո գերազանցում է 1 մլ (գր) համար 10 յուանը կամ մեկ կտորի համար 15 յուանը (**15 RMB/piece**): Բարձրակարգ (luxury) ապրանքների համար զանձվում է հավելյալ սպառման հարկ՝ 15%-ի չափով¹⁵:

- Եթե անհատի կողմից էլեկտրոնային առևտրով ներմուծված ապրանքի արժեքը 5000 յուանից ցածր է, և դեռևս չի հատվել տարեկան 26000-ի սահմանաչափը, պետք է վճարվի միայն միասնական հարկի դրույք (integrated tax rate)՝ սովորաբար 9,1%: Եթե գործարքի գինը գերազանցում է 5000 յուանը, բայց տարեկան սահմանաչափը դեռ չի հատվել, ապրանքը թույլատրվում է ներմուծել միջսահմանային էլեկտրոնային առևտրի մոդելով, բայց ամբողջական դրույքաչափերով հարկման պայմանով: Եթե տարեկան սահմանաչափը գերազանցված է, կարգավորվում է որպես հասարակ առևտրային գործարք (general trade)՝ հարկային պարտավորությունների ամբողջ մասով¹⁶:
- Սկսած 2019թ. ապրիլի 3-ից, փոստային հարկի դրույքը նվազել է 15%-ից մինչև 13% սննդի և դեղորայքի համար¹⁷ և 25%-ից մինչև 20% տեքստիլի, կաշվե ապրանքների և էլեկտրական տեխնիկայի համար¹⁸:
- 2019թ. ապրիլի 1-ից սկսած, միջսահմանային էլեկտրոնային առևտրի հարթակները պետք է համագործակցեն մաքսատների հետ և տրամադրեն տեղեկատվություն վճարման, պատվերի և փոխադրման վերաբերյալ:
- Կազմակերպություններին խստորեն արգելվում է վերավաճառել այս ճանապարհով ներմուծված ապրանքները:

Ընդհանրացնելով փաստենք, որ Չինաստանն արդեն իսկ որդեգրել ու կիրառում է էլեկտրոնային առևտրի հարկային և մաքսային կարգավորման ուղղորդված քաղաքականություն այն դեպքում, երբ երկրներից շատերը (այդ թվում՝ Հայաստանը) դեռ էլեկտրոնային առևտրի սահմանման, հաշվառման և կարգավորման առաջին փորձերն են անում: Այս առումով, Չինաստանի փորձն ուսանելի է,

¹⁵ EXPORT2ASIA, IMPORT TAXES & VAT IN CHINA: A GUIDE FOR CROSS BORDER E-COMMERCE, DECEMBER 22, 2018

https://www.export2asia.com/blog/china-import-taxes-vat/?fbclid=IwAR0fM1A03c_PIHYYQs_JMHRW_FZCaxDeae6xMroJh6EO5jyczUmhZoveKK4

¹⁶ WALKTHECHAT, SHIPPING TO CHINA FOR CROSS-BORDER E-COMMERCE: A SIMPLE GUIDE, THOMAS GRAZIANI, APRIL 7 2019

https://walkthechat.com/shipping-china-cross-border-e-commerce-simple-guide/?fbclid=IwAR39q2B7VBa4FICT7BH7PpcHq7TEi2ZyEzEBFzsN4R_OFdxt1oc3ZBoPQn4#apr-2019

¹⁷ State Council Announces Cuts to Government Fees and Personal Postal Article Taxes, 17 April 2019 - <https://research.hktdc.com/en/article/MzA4NjYzOTA5>

¹⁸ China Details Reductions to Personal Postal Articles Tax, 17 April 2019 - <https://research.hktdc.com/en/article/MzIyNTY3ODc0>

սակայն չի կարող նույնությամբ ներդրվել այլ երկրներում՝ առանց վերջիններիս սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները հաշվի առնելու: Ուշադրության է արժանի նաև ըստ ներմուծվող ապրանքների՝ դրանց նկատմամբ սահմանվող հարկային դրույքաչափերի տարբերակումը, որն առավելագույնս հարմարեցված է սպառողների և նմանօրինակ ապրանքների տեղական արտադրողների շահերի պաշտպանությանը: Այդուհանդերձ, Հայաստանը նման միջոցառումներ ՀՀ-ում անհնար է իրականացնել միակողմանիորեն, քանզի ԵԱՏՄ անդամ երկիրն իրավասու չէ փոփոխելու մաքսատուրքի դրույքաչափերն առանց անդամ երկրների համաձայնության:

Էլեկտրոնային առևտրի մասնակիցների հաշվառման և գրանցման պահանջներ են ներդրվել նաև **Հարավային Կորեայում**, ուր սկսած 2015 թվականի հուլիսից՝ արտերկրից առցանց գնումներ իրականացնող անհատներին Հվ. Կորեայի մաքսային ծառայությունն առաջարկվում է գրանցել Էլեկտրոնային հայտարարագրման հաշվառման համար, որը կոչվում է մաքսային հայտարարագրման ծածկագիր կամ անհատական մաքսային համարանիշ (Individual customs number): Վերջինիս բացակայության դեպքում արտերկրից ապրանքներ ստանալու դեպքում անհատը կարող է օգտագործել ռեզիդենտության գրանցման կամ նույնականացման քարտի համարը: Մաքսային հայտարարագրման անհատական ծածկագիր ունենալու առաջնային նպատակը թեև մաքսագերծման գործընթացի պարզ և արագ ապահովումն է, այդուհանդերձ նման համարանիշերի կիրառմամբ, ըստ էության, լուծվում են Էլեկտրոնային առևտրի հաշվառման և վիճակագրության վարման խնդիրները:

Կորեայի մաքսային ծառայությունը սահմանում է ապրանքների անմաքս ներմուծման ընթացակարգերը և անմաքս ներմուծման թույլատրելի շեմը գերազանցող ապրանքների նկատմամբ կիրառվող դրույքաչափերը:

Անմաքս ներմուծման կարգավիճակը որոշվում է հետևյալ չափանիշներով.

- 150 ԱՄՆ դոլարից (ԱՄՆ-ից ներմուծվելու դեպքում՝ 200 ԱՄՆ դոլարից) ցածր արժեք ունեցող իրեր՝ ներառյալ բեռնափոխադրումը, որոնք գնվում են երկրի ռեզիդենտների կողմից անձնական օգտագործման նպատակով,
- առևտրային նմուշների համար օգտագործվող և 240 ԱՄՆ դոլար արժեքը չգերազանցող իրերը,
- Ներմուծված իրեր, որոնք պետք է օգտագործվեն առևտրի ցուցահանդեսների կամ տոնավաճառների մասնակից անհատների

կողմից՝ Կորեայի մաքսային ծառայության թույլտվությամբ դրանք անվճար տարածելու նպատակով: Յուրաքանչյուր ապրանքի արժեքը պետք է չգերազանցի 5 ԱՄՆ դոլարը:

- 0 տոկոս մաքսատուրքով հարկվող ապրանքները:

Այն անհատները, որոնց կողմից ներմուծված ապրանքների արժեքը գերազանցում է 150 ԱՄՆ դոլարը (200 ԱՄՆ դոլարը՝ ԱՄՆ-ից ներմուծվելու դեպքում), ստիպված են վճարել ներմուծման մաքսատուրքերը, ինչպես նաև 10 տոկոս ԱԱՀ (AUSTRADE, 2017, p. 31), որը հաշվարկվում է ներմուծված ապրանքների մաքսային արժեքի և գանձման ենթակա մաքսատուրքի հանրագումարի նկատմամբ:

Միջսահմանային առցանց առևտրի նկատմամբ Հվ.Կորեայում կիրառելի է մաքսազերծման երկու եղանակ.

1. Արտոնյալ մաքսազերծում (պարզեցված ընթացակարգով) սահմանված կատեգորիայի ապրանքների դեպքերում

Մաքսազերծման արտոնյալ ընթացակարգը ենթադրում է 1-2 աշխատանքային օրվա ընթացքում պարզ մաքսային ստուգում, երբ փաթեթն ուղեկցվում է հաշիվ-ապրանքագրով (invoice), որը պարունակում է ապրանքների ցանկ, կշիռների և արժեքների, ինչպես նաև ուղարկողի և ստացողի վերաբերյալ տվյալներ: Արտոնյալ ընթացակարգի շրջանակներում մաքսատուրքեր և հարկեր չեն գանձվում, եթե առցանց առևտրով ներմուծվող ապրանքների գնի, փոխադրման և ապահովագրության արժեքների ընդհանուր հանրագումարը չի գերազանցում 150 ԱՄՆ դոլարը, իսկ ԱՄՆ-ից պատվերի դեպքում՝ 200 ԱՄՆ դոլարը: Միաժամանակ, ապրանքները չպետք է ներառված լինեն ներմուծման սահմանափակումներ ունեցող ապրանքների ցանկում, հակառակ դեպքում, իրականացվում է ստանդարտ մաքսազերծման գործընթաց:

2. Սնադարտ մաքսազերծում

Եթե փաթեթը պարունակում է առնվազն մեկ ապրանք, որը ներառված է սահմանափակումով ապրանքների ցանկում, ապա իրականացվում է ստանդարտ մաքսազերծման գործընթաց՝ անկախ արտահանման երկրից: Ստանդարտ մաքսազերծման ենթակա ապրանքների դեպքում նույնիսկ ԱՄՆ-ից ներկրված ապրանքների համար առավելագույն սահմանաչափ է ընդունվում 150 ԱՄՆ դոլարը: Ձեռք բերված ապրանքները պետք է լինեն անձնական օգտագործման համար, իսկ ներմուծվող ապրանքների գնի, բեռնափոխադրման և ապահովագրության հանրագումարը պետք է լինի 150 ԱՄՆ դոլարի

սահմաններում: Կորեայի մաքսային ծառայությունը գնորդին տեղեկացնում է վճարման ենթակա ցանկացած լրացուցիչ հարկի մասին: Մաքսագերծման ստանդարտ գործընթացը սովորաբար տևում է երկուսից ինն աշխատանքային օր:

Սահմանափակումով ապրանքները ներառում են սննդային հավելումներ և ֆունկցիոնալ սնունդ, սննդի այլ տեսակներ և գյուղատնտեսական ապրանքներ, չինական դեղամիջոցներ, դեղագործական արտադրանքներ, ֆունկցիոնալ կոսմետիկա: Բացի այդ, ակոհոլը, ծխախոտը, ինչպես նաև այն ապրանքները, որոնք չունեն համապատասխան ուղեկցող փաստաթղթեր, մասնավորապես՝ հաշիվապրանքագիր, որում նշված կլինեն անվանում, քանակ և գին, պետք է անցնեն ստանդարտ մաքսային գործընթաց:

Միաժամանակ, Հվ.Կորեայի մաքսային ծառայությունը սահմանում է այն ծավալները, որոնց դեպքում ներմուծված իրերը համարվում են անձնական օգտագործման, մասնավորապես՝

- Առողջապահական ապրանքներ (դեղորայք)՝ մինչև 6 սրվակ,
- գյուղատնտեսական ապրանքներ՝ մինչև 5կգ,
- ընկուզեղեն՝ 1կգ,
- խոհանոցային դանակներ՝ մինչև 150 ԱՄՆ դոլար արժեքով,
- մանկական սնունդ՝ մինչև 5կգ և ոչ ավել, քան 150 ԱՄՆ դոլար արժողությամբ,
- օծանելիք՝ մինչև 150 ԱՄՆ դոլար արժեքով և մինչև 60մլ ծավալով:

Կան նաև ներմուծման սահմանափակումներ կենդանիների և կենդանական ապրանքների, մետաղադրամների, թղթադրամների, արժույթի, դանակների, թմրամիջոցների, բույսերի և բուսական արտադրանքների, ինչպես նաև ընդհանուր առմամբ հողի նմուշների և հողի նկատմամբ: Արգելված իրերը ներառում են՝ զենք և զինամթերք, ակոհոլային խմիչքներ, հացահատիկային արտադրանքներ, կաթնամթերք, բժշկական սարքավորումներ, մսամթերք, յուղեր և սերմեր, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր և մետաղներ և այլն:

Հայաստանի Հանրապետությունում կիրառելության տեսանկյունից Հվ. Կորեայի փորձն օգտակար է էլեկտրոնային առևտրով ներմուծվող ապրանքների փաստաթղթային հիմնավորվածության պահանջներով, որոնք պահանջվում են նույնիսկ արտոնյալ ընթացակարգով ներմուծումների նկատմամբ: Հատկապես կիրառելի է այն դրույթը, որով թույլատրելի սահմանաչափը չգերազանցող ծանրոցները ենթակա են ստանդարտ ընթացակարգով մաքսագերծման և համապատասխան

հարկերի գանձման, եթե դրանք չեն ուղեկցվում անհրաժեշտ փաստաթղթային հենքով (հաշիվ-ապրանքնագիր, ծագման երկրի հավաստագիր և այլն):

Էլեկտրոնային առևտրի հաշվառման **սինգապուրյան** փորձը մի փոքր տարբերվում է նախորդներից՝ արտահանման գործարքների նկատմամբ տարբերակված մոտեցմամբ: Էլեկտրոնային առևտուրը Սինգապուրում հարկվում է ապրանքների և ծառայությունների հարկով (ԱԾՀ), որը համարժեք է ԱԱՀ-ին: Վերջինով հարկվելու համար տնտեսվարող սուբյեկտը պետք է գրանցված լինի որպես այս հարկատեսակը վճարող: Ընդ որում, միայն ապրանքների և ծառայությունների արտահանմամբ զբաղվող ընկերությունները ազատվում են ԱԾՀ գրանցման պարտավորությունից: Այսպես՝

- ԱԾՀ-ով հարկատու հանդիսացող և համապատասխան գրանցում ունեցող վաճառողների կողմից ապրանքների առցանց վաճառքը Սինգապուրում ենթակա է ԱԾՀ-ով հարկման:
- Էլեկտրոնային վաճառքներով արտահանվող ապրանքներն ազատվում են ԱԾՀ-ից՝ անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման դեպքում:
- Եթե ապրանքների ֆիզիկական առաքումն իրականացվում է Սինգապուրից դուրս գտնվող մի վայրից մյուսը, ապա որևէ ԱԾՀ-ի գանձում չի պահանջվում:
- Թվայնացված ապրանքների վաճառքը, ինչպիսիք են՝ առցանց կինոնկարները, էլեկտրոնային գրքերը կամ համակարգչային ծրագրերը, որոնք հաճախորդը կարող է ներբեռնել համացանցից, համարվում է ծառայությունների մատակարարում և ենթակա է նաև ԱԾՀ-ով հարկման, ինչպես ֆիզիկական ապրանքների մատակարարումը:
- Սինգապուրի մաքսատանը ԱԾՀ վճարվում է այն դեպքերում, երբ փոստով կամ օդային ճանապարհով ներմուծվող ապրանքների արժեքը գերազանցում է 400 սինգապուրյան դոլարը:
- Եթե «ներմուծվում» են թվայնացված ապրանքներ, ապա այդ թվայնացված ապրանքները ներբեռնելու ժամանակ ԱԾՀ չի հարկվում, անկախ դրանց արժեքից:
- Առցանց այնպիսի թվայնացված ապրանքներ, ինչպիսիք են երաժշտությունն ու ծրագրաշարը անհատ սպառողին կամ տնտեսվարող սուբյեկտին վաճառելու դեպքում, պետք է գանձվի 7% ԱԾՀ, եթե հաճախորդը Սինգապուրի ռեզիդենտ չէ: Հաճախորդի սինգապուրյան ռեզիդենտությունը պարզելու համար որպես ցուցիչներ են ընդունվում ձեռնարկության հասցեն, դոմեյնի անունը և IP հասցեն:
- Ապրանքների կամ ծառայությունների ցանկացած մատակարարման

համար առցանց ցուցադրված, գովազդվող, հրապարակված բոլոր գները պետք է ներառեն ԱԾՀ-ն:

- Եթե կայքում կամ կայքէջում վաճառվում է գովազդային տարածք, որը թույլ է տալիս հասանելիություն ունենալ ինչպես Սինգապուրում, այնպես էլ արտերկրում, ապա այդ գործարքներն ազատվում են ԱԾՀ-ից: Այնուամենայնիվ, եթե գովազդը տեղադրված է կայքում կամ կայքէջում, որը հասանելի է միայն Սինգապուրի օգտատերերի համար (այսինքն՝ .sg տիրույթը/դոմեյնը), ապա այն ենթակա է ԱԾՀ-ով հարկման:
- Վեբ-հոսթինգի ծառայությունների մատուցումը նույնպես ենթակա է ԱԾՀ-ի, եթե վերջինս չի դասվում որպես միջազգային ծառայություն¹⁹:

2020 թվականի հունվարի 1-ից Սինգապուրի սպառողներից գանձվում է ապրանքների և ծառայությունների հարկ (ԱԾՀ) արտերկրից ներմուծված թվային ծառայությունների դիմաց: Հարկային փոփոխությունն ընդգրկում է ծառայությունների լայն շրջանակ, ներառյալ՝ ներբեռնման ենթական այնպիսի ապրանքներ կամ ծառայություններ, ինչպիսիք են՝ էլեկտրոնային գրքերը և բջջային հավելվածները, ծրագրակազմը, գրասենյակային ծրագրակազմը, բաժանորդագրության վրա հիմնված լրատվամիջոցները, երաժշտությունը և առցանց խաղերը, ինչպես նաև տվյալների էլեկտրոնային կառավարումը, օրինակ՝ ամպային պահոցները կամ վեբ-հոսթինգը: Նոր ռեժիմի ներքո արտասահմանյան թվային ծառայություններ մատուցող ընկերությունները, որոնց տարեկան շրջանառությունն ավելին է, քան 1 միլիոն սինգապուրյան դոլարը կամ ավելի քան 100 000 սինգապուրյան դոլար արժողությամբ թվային ծառայություններ են վաճառել Սինգապուրի հաճախորդներին վերջին 12 ամսվա ընթացքում, պետք է գրանցվեն որպես ԱԾՀ վճարող: Նոր հարկը չի տարածվի ապրանքների առցանց գնումների վրա, քանի որ ԱԾՀ-ն արդեն իսկ վճարվում է Սինգապուր ներմուծված 400 սինգապուրյան դոլարից բարձր արժեք ունեցող ապրանքների վրա (օդային կամ փոստով ներմուծում)²⁰:

Փաստացիորեն, սինգապուրյան հարկային քաղաքականությունը էլեկտրոնային առևտրով ներմուծվող ապրանքներից զատ որպես

¹⁹ GUIDEMESINGAPORE, HAWKSFORD, STARTING AN ONLINE BUSINESS IN SINGAPORE PART 4: TAXATION

<https://www.guidemesingapore.com/business-guides/industry-guides/ecommerce-industry/starting-an-online-business-in-singapore-part-4-taxation>

²⁰ SINGAPORE TAX ON OVERSEAS DIGITAL SERVICES KICKS IN TOMORROW, BY EILEEN YU FOR BY THE WAY | DECEMBER 31, 2019

<https://www.zdnet.com/article/singapore-tax-on-overseas-digital-services-kicks-in-tomorrow/>

լիարժեք հարկման օբյեկտ է դիտարկում թվայնորեն փոխանցվող թվային ծառայությունները, ինչն ըստ էության ՀՀ-ում ընդհանրապես դուրս է հարկային մարմինների վերահսկողությունից: Մինգապուրի փորձառությունն ուշագրավ է հատկապես էլեկտրոնային միջավայրում գրանցման հասցեով պատվիրատուի և ծառայություն մատուցողի ռեզիդենտության հստակեցման և դրանից բխող տարբերակված հարկային քաղաքականության կիրառմամբ, ինչն, ըստ էության, դեռևս խորթ է նույնիսկ էլեկտրոնային գործարքների կարգավորման կայացած համակարգ ունեցող երկրներում:

Այնուամենայնիվ, անկախ տարբեր երկրների լավագույն փորձի տեղայնացման գալթակողությունից՝ Հայաստանը որպես **ԵԱՏՄ անդամ երկիր** սահմանափակ հնարավորություններ ունի միջսահմանային առևտրային հարաբերությունները կարագորելու հարցում:

ԵԱՏՄ անդամ երկրներում դեռևս չկա միասնական մոտեցում էլեկտրոնային առևտրի հարկման մասով, թեև միության անդամ առանձին երկրներ այդ ուղղությամբ ինքնուրույն ջանքեր են գործադրում: Այսպես, **Բելառուսի Հանրապետությունում** մասամբ նախատեսված է էլեկտրոնային առևտրի հարկման հատուկ կարգ: Բելառուսի Հանրապետության Հարկային օրենսգիրքը լրացվել է «էլեկտրոնային դրամ», «էլեկտրոնային դրամապանակներ» հասկացություններով: Այս ճշգրտումներն ուղղված են այն օբյեկտների ցանկի ընդլայնմանը, որոնց վրա հնարավոր է ուղղել հարկերի, տուրքերի, տույժերի գանձումը: Սահմանվել են նաև վճարման տերմինալների տեղադրման ու օգտագործման, հաշվարկների անկանխիկ ձևի օգտագործման դրույթները²¹: 2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ են մտել Բելառուսի Հանրապետության Հարկային օրենսգրքի դրույթները, որոնք նախատեսում են օտարերկրյա ընկերությունների կողմից տրամադրվող էլեկտրոնային ծառայություններից ԱԱՀ-ի գանձում²²:

Ղրղզստանում բացակայում է էլեկտրոնային առևտրի հարկման հատուկ իրավական կարգավորում:

Ռուսաստանի Դաշնությունում վերջերս ակտիվ աշխատանք է տարվում ինչպես ապրանքների, այնպես էլ ծառայությունների էլեկտրոնային առևտրի հարկման հնարավորության վերլուծության

²¹ **Եվրասիական տնտեսական հանձնաժողով**, «ԵՏՀ-ն ուսումնասիրում է էլեկտրոնային առևտրի հարկման բնագավառում օրենսդրության ներդաշնակեցման հնարավորությունը», (<http://eec.eaeunion.org/hy/nae/news/Pages/18-04-2017-2.aspx>)

²² Налоговый Кодекс Республики Беларусь (особенная часть) Статья 141, Статья 120, пункт 8, <https://www.pravo.by/document/?guid=3871&p0=HK0900071>

ուղղությամբ: 2017 թ. հունվարի 1-ից ներդրվել և գործում է 18% չափով ԱԱՀ այն օտարերկրյա ընկերությունների համար, որոնք համացանցի միջոցով էլեկտրոնային պարունակություն (ապրանք) են վաճառում ռուսական օգտատերերին: Ակտիվորեն քննարկվում է ԱԱՀ ներդրումը ֆիզիկական անձանց կողմից ապրանքների անդրսահմանային էլեկտրոնային առևտրի գործառնությունների համար²³:

ՀՀ-ում էլեկտրոնային եղանակով պատվիրվող և աշխարհի տարբեր ծայրերից ՀՀ առաքվող ապրանքների այն հատվածը, որը գերազանցում է ֆիզիկական անձանց կողմից առանց մաքսային ձևակերպման անհրաժեշտության ներմուծվող ապրանքների արժեքի կամ ծավալի նկատմամբ սահմանված առավելագույն թույլատրելի սահմանաչափը, ենթակա է ստանդարտ ընթացակարգով մաքսային ձևակերպման և ներառվում է ՀՀ ներմուծման ընդհանուր ծավալների մեջ՝ առանց որևէ տարանջատման: Իսկ էլեկտրոնային ներքին առևտրաշրջանառության հարկմանն առնչվող միակ քայլն առայժմ 2020թ. հունիսի 1-ին ընդունված ՀՕ-280-Ն օրենքով ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխություններով կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ինտերնետային կայքի կամ էլեկտրոնային հավելվածի (էլեկտրոնային առևտրային հարթակի) միջոցով ընդունվող պատվերների շրջանակներում ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման գործարքների մասով էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և էլեկտրոնային կտրոնների տպագրման (գեներացման) հնարավորությունների ամրագրումն է²⁴, որն, ըստ էության, էլեկտրոնային սովերային առևտրաշրջանառությունը հարկման դաշտ տեղափոխելու առաջին գործուն քայլն է: Ըստ էության, քանի դեռ էլեկտրոնային առևտրին առնչվող հարկային օրենսդրությունը հստակեցված չէ, ՀՀ տնտեսվարողների էլեկտրոնային առևտրային գործունեության վրա պետք է տարածվեն մանրածախ առևտրի նկատմամբ կիրառվող 20% ԱԱՀ-ը կամ 3,5-5% շրջանառության հարկը, եթե ընթացիկ տարում մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառությունը չի գերազանցել 58,35 մլն դրամը²⁵, կախված

²³ Եվրասիական տնտեսական հանձնաժողով, «ԵՏՀ-ն ուսումնասիրում է էլեկտրոնային առևտրի հարկման քննադատում օրենսդրության ներդաշնակեցման հնարավորությունը», (<http://eec.eaeunion.org/hy/nae/news/Pages/18-04-2017-2.aspx>)

²⁴ Հայաստանի հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին 2020թ. հունիսի 1-ի ՀՕ-280-Ն որոշում:

²⁵ Հայաստանի Հանրապետության օրենքը շրջանառության հարկի մասին (ՀՕ-236-Ն, առ 19.12.2012թ.):

հարկվող շրջանառության փաստացի ծավալներից:

Ղազախստան «Էլեկտրոնային առևտրի զարգացման համար բարենպաստ միջավայրի ստեղծում» նախաձեռնության շրջանակներում համակողմանի աջակցություն է ցուցաբերում էլեկտրոնային առևտրով զբաղվելու նպատակ ունեցող բիզնեսին: Համաձայն «Հարկերի և պետությունը այլ պարտադիր վճարների մասին» օրենսգրքի 1-ին հոդվածի 65-րդ կետի՝ ապրանքների էլեկտրոնային առևտուրը հանդիսանում է ֆիզիկական անձանց կողմից ապրանքների վաճառքի ձեռնարկատիրական գործունեություն, որն իրականացվում է տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով առցանց խանութի և (կամ) առցանց հարթակի միջոցով՝ հետևյալ պայմաններով.

- ապրանքների վաճառքն իրականացվում է էլեկտրոնային ձևով,
- ապրանքների գնի վճարումը կատարվում է անկանխիկ եղանակով,
- սեփական առաքման ծառայության առկայություն կամ ապրանքների փոխադրման, սուրհանդակային և (կամ) փոստային կապի ծառայություններ մատուցող անձանց հետ պայմանագրերի առկայություն (ԵՅԿ, 2019):

Սա նշանակում է, որ այն ձեռնարկատերը, որն իր գործունեության 90 տոկոսն իրականացնում է էլեկտրոնային առևտրի տեսքով, պետական եկամուտների մարմին հայտարարագիր ներկայացնելիս պետք է հիմնավորի, որ իրականացված գործարքների պատվերները կատարվել են ինտերնետի միջոցով՝ ներկայացնելով անկանխիկ եղանակով ստացված բանկային փոխանցումները և համապատասխան առաքման բեռնագիրը, ինչի արդյունքում հնարավորություն կստանա ազատվելու եկամտահարկից:

Հարկային օրենսգրքում վերջերս կատարված փոփոխության շնորհիվ, Ղազախստանի ինտերնետային ընկերությունները հինգ տարով կազատվեն հարկերից: Մշակվում են նաև բջջային վճարումների մեխանիզմի պարզեցման, դրանց դիմաց գանձվող վճարների չափի նվազեցման, ամբողջովին էլեկտրոնային հաշիվ-ապրանքագրերի օգտագործմանն անցնելու մոտեցումները:

B2C միջսահմանային առևտրում՝ ԵՏՀ խորհրդի 2017 թ. դեկտեմբերի 20-ի թիվ 107 «Անհատական օգտագործման ապրանքների հետ կապված որոշ հարցերի վերաբերյալ» որոշմամբ (փոփոխված ԵՏՀ խորհրդի 2018 թ. նոյեմբերի 1-ի N 91 որոշմամբ)՝ հստակեցվել են անհատական օգտագործման ապրանքների քաշը և քանակական նորմերը, որոնք կարող են ներմուծվել ԵԱՏՄ՝ առանց մաքսատուրքերի և հարկերի վճարման, ինչպես նաև սահմանվել են թույլատրված

սահմանները գերազանցելու համար տուրքերի չափերը (ԵՅԿ, 2019):

Միությունում նվազեցնում են առանց մաքսատուրքերի ներկրման քաշի և արժեքի սահմանաչափերը: Եթե 2019 թվականի հունվարի 1-ից գործող մեկ օրացուցային ամսվա ընթացքում գործում էր մինչև 500 եվրո արժողությամբ և ոչ ավելի, քան 31 կգ կշիռ ունեցող բեռների սահմանաչափ, ապա 2020 թվականի հունվարի 1-ից 31 կգ կշիռ ունեցող բեռների սահմանաչափը սահմանվեց 200 եվրո:

Աղյուսակ 2. ԵԱՏՄ անդամ երկրներում անմաքս ներմուծման սահմանաչափերը 2018թ. դրությամբ

Հայաստան	350 եվրո
Բելառուս	22 եվրո
Ղազախստան	1000 եվրո
Ղրղստան	1000 եվրո
Ռուսաստան	1000 եվրո

Աղբյուր՝ Евразийская экономическая комиссия, «Повышение норм беспошлинного ввоза товаров для личного пользования в страны ЕАЭС будет обходиться дешевле», 21.12.2017

Փոստային առաքումներով կամ փոխադրողների կողմից առաքվող ապրանքների նկատմամբ (ներառյալ՝ էքսպրես փոխադրումները) Միության տարածքում մաքսատուրքեր գանձելիս, անդամ պետություններն իրավունք ունեն սահմանել իրենց սեփական՝ ավելի խիստ սահմանափակումները, քան Հանձնաժողովի կողմից որոշված արժեքի և (կամ) քանակի ներմուծման նորմերն են:

ԵԱՏՄ երկրներում առանց մաքսատուրքերի առևտրի ընդունված սահմանաչափերի միջև էական տարբերությունների առկայությունը կարող է հանգեցնել ներմուծվող ապրանքների հեռավար առևտրի ընդլայնմանն անմաքս ներմուծման բարձր սահմանաչափով երկրներից դեպի ցածր սահմանաչափ ունեցող երկրներ:

B2B միջսահմանային առևտուր: ԵԱՏՄ անդամ չհանդիսացող երկրներից ապրանքներ ներմուծելիս անուղղակի հարկերը և մաքսատուրքերը գանձվում են մաքսային մարմինների կողմից Մաքսային միության մաքսային օրենսգրքի հիման վրա Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագներով:

B2C առևտուրը ԵԱՏՄ անդամ երկրների միջև: ԵԱՏՄ անդամ երկրների միջև B2C առևտրի ժամանակ վաճառողը պետք է վճարի ԱԱՀ իր երկրի դրույքաչափով (չնայած այն հանգամանքին, որ B2B

առևտրում անուղղակի հարկերը վճարվում են սպառման երկրում, իսկ արտահանվող ապրանքներն ազատվում են ներքին հարկերը վճարելուց (ԵԱՏՄ պայմանագրի 71-րդ հոդվածի 1-ին կետ): Այս իրավիճակը ծագել է այն պատճառով, որ B2C առևտրի դեպքում համարվում է, որ մաքսային սահմանի բացակայության պայմաններում ֆիզիկական անձանց կողմից գնումների հետագծին հետևելու և ԱԱՀ-ի ծախսերը անհիմն բարձր են: Այս կարգը հանգեցնում է ԱԱՀ-ի բարձր մակարդակ ունեցող երկրներից էլեկտրոնային վաճառքի թանկացմանը և առավելություններ է ստեղծում ԱԱՀ-ի ցածր դրույքաչափի ունեցող երկրների համար: Այն հանգեցնում է նաև իրական տնտեսական պատճառներով չհիմնավորված վաճառքի ծավալների վերաբաշխմանը (ԵՁԿ, 2019):

B2B առևտուրը ԵՏՄ անդամ երկրների միջև: Միության անդամ պետությունների միջև B2B առևտրի ժամանակ ԵԱՏՄ մյուս երկրներից ապրանքներ ներմուծող հարկատուները (այլ պատասխանատու անձինք) ԱԱՀ-ն և ակցիզային հարկերը վճարում են այն երկրի հարկային մարմիններին, ուր ներմուծվել են ապրանքները՝ առանձին հարկային հայտարարագրի և ապրանքի ներմուծման դիմում-հայտի հիման վրա: Հարկերի վճարման (հարկերից ազատվելու) հարկային մարմնի նշագրերով դիմում-հայտը փաստաթուղթ է, որը հաստատում է ապրանքների՝ այլ երկիր արտահանման փաստը, և, հետևաբար, արտահանողի ԱԱՀ զրոյական դրույքաչափ կիրառելու և ակցիզային տուրքերից ազատվելու իրավունքը: Առանց հարկերի վճարման նշագրերի դիմում-հայտի, արտահանողը իրավունք չի ստանում կիրառել ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափ և ազատվել ակցիզային հարկի վճարումից:

Հարկ վճարողների հիմնական խնդիրները ծագում են արտահանումն ու հարկերի վճարումը հավաստող փաստաթղթերի ձևավորման հետ կապված, այդ թվում, ոչ ստանդարտ իրավիճակներում, օրինակ, միջնորդների (գործակալների, կոմիսիոներների) մասնակցության ժամանակ, ինչպես նաև ապրանքները վերադարձնելու դեպքում (ԵՁԿ, 2019):

ԵՏՀ դեռևս 2017թ. նախաձեռնել է էլեկտրոնային առևտրի հարկման վերազգային կարգավորման հայեցակարգի մշակումը²⁶: Իսկ արդեն 2020թ. ԵԱՏՄ-ը քննարկում է անդրսահմանային ինտերնետ-առևտրի

²⁶ **Եվրասիական տնտեսական հանձնաժողով**, «ԵՏՀ-ն կմշակի ԵԱՏՄ երկրների էլեկտրոնային ոլորտում հարկման ընդհանուր հայեցակարգը», 30.06.2017 (<http://www.eurasiancommission.org/hy/nae/news/Pages/30-06-2017.aspx>)

օպերատորի ինստիտուտի ստեղծման նպատակահարմարությունը²⁷:

Ինչպես տեսնում ենք, ԵԱՏՄ անդամ պետություններում թվային առևտրի էկոհամակարգի տարրերը հասունության տարրեր փուլերում են գտնվում, ինչը դժվարացնում է գործընթացը: Սակայն միանշանակ արժե գնալ թվայնացման ճանապարհով, քանի որ այս գործընթացը կհանգեցնի ԵԱՏՄ երկրների, ինչպես նաև երրորդ երկրների միջև ապրանքների և ծառայությունների առևտրի ծավալների ավելացմանը, իսկ Հայաստանն այսպիսով հնարավորություն կունենա շրջանցելու ներքին նեղ սպառման շուկա ունենալու լուրջ խոչընդոտը, որը ծառացած է ՀՀ տնտեսական աճի ճանապարհին:

3. Եզրակացություն

Ամփոփելով գալիս ենք այն եզրահանգման, որ Էլեկտրոնային առևտրի մաքսային և հարկային կարգավորման մեխանիզմները, հարկման ենթակա օբյեկտը և կիրառվող դրույքաչափերը խիստ տարբեր են դիտարկվող բոլոր երկրներում, ինչը մասամբ պայմանավորված է միջազգային միասնական գործիքակազմի բացակայությամբ: Թեև Հայաստանի Հանրապետությունում կիրառելիության տեսանկյունից, այդուհանդերձ, կարելի է առանձնացնել որոշակի դրույթներ: Քանի որ նախքան Էլեկտրոնային առևտրի հարկման հիմնահարցերի հստակեցումը, ՀՀ-ում առավել խորքային առաջնահերթություն է հանդիսանում Էլեկտրոնային առևտրի հաշվառումն ու նույնականացումը՝ ստվերային հատվածից վերջինիս դուրս բերման գործուն մեխանիզմների ներդրմամբ, այս մասով կիրառելի է Էլեկտրոնային առևտրով զբաղվողների գրանցման չինական և մասամբ սինգապուրյան փորձը կամ դրանց սինթեզը: Երկրների մեծ մասի դեպքում Էլեկտրոնային առևտրի գործարքների հսկողական մեխանիզմների ներդրման և ոլորտի թափանցիկության ապահովման նկատառումներով սկզբնապես սահմանվում են որոշակի արտոնություններ, որոնք հասանելի են միայն գրանցված տնտեսվարողներին, ինչը ևս գործուն քայլ է հարկային և մաքսային մարմինների կողմից Էլեկտրոնային առևտրաշրջանառության նկատմամբ լիարժեք հսկողություն սահմանելու հեռահար նպատակների իրագործման առումով: Եթե Էլեկտրոնային ներքին առևտրի հարկային կարգավորման

²⁷ Եվրասիական տնտեսական հանձնաժողով, «ԵԱՏՄ-ը քննարկում է անդրսահմանային ինտերնետ-առևտրի օպերատորի ինստիտուտի ստեղծումը», 16.07.2020 (http://www.eurasiancommission.org/hy/nae/news/Pages/2020-07-16-2.aspx?fbclid=IwAR0VHTZv-rXiWhLRGAFVvqjkwH_0lfVFksvzPc_BG34o9lk7pC96Yg-SMQQ)

առումով ՀՀ համեմատաբար ազատ է իր գործողություններում, ապա միջսահմանային էլեկտրոնային առևտրի դեպքում ի հայտ է գալիս ԵԱՏՄ շրջանակներում մաքսասակագնային քաղաքականության համաձայնեցման և ներդաշնակեցման անհրաժեշտություն:

Գրականություն

References (with English translation and transliteration)

- Հարությունյան Վ.Լ. (2019), Հայաստանի Հանրապետության ստվերային տնտեսության պատճառների վերլուծություն / - Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, 200 էջ:
- Harutyunyan V.L. (2019), Analysis of the causes of the shadow economy of the Republic of Armenia / - Yerevan. "Science" publishing house of NAS RA, 2019, 200 pages.
- AUSTRADE (2017), "E-Commerce in Korea: A Guide for Australian Business", 2017, 44p., (<https://www.austrade.gov.au/ArticleDocuments/1358/E-Commerce-Korea-Guide.pdf.aspx>)
- ЕЭК (2019), "Доклад о развитии цифровой (интернет) торговли ЕАЭС", - Москва: Евразийская экономическая комиссия, 2019 г., 78с., (<http://www.eurasiancommission.org/ru/act/dmi/workgroup/Documents/%D1%86%D0%B8%D1%84%D1%80%D0%BE%D0%B2%D0%B0%D1%8F%20%D1%82%D0%BE%D1%80%D0%B3%D0%BE%D0%B2%D0%BB%D1%8F.pdf>)
- EEC (2019), "Report on the development of digital (Internet) trade in the EAEU". -
- Moscow: Eurasian Economic Commission, 2019, 78 p.
- Калужский М.Л. (2013), Приоритеты институционального регулирования электронной коммерции: Россия и мировые тенденции // Национальные интересы: приоритеты и безопасность. – № 42 (231). – С. 11-22.
- Kaluzhsky M.L. (2013), Priorities of the institutional regulation of electronic commerce: Russia and global trends // National interests: priorities and security. - No. 42 (231). - p. 11-22
- Pool P.W., Parnell J.A., Spillan J.E., Carraher S., Lester D.L. (2006), "Are SMEs meeting the challenge of integrating e-commerce into their businesses?" A review of the development, challenges and opportunities. International Journal of Information Technology and Management 5: 97-113.
- Qiongwei Y., Baojun M., "Internet+ and Electronic Business in China: Innovation and Applications", Emerald Group Publishing, UK, 2018, p. 15-16.

- Tsai W.H., Yang, Ch.H., Huang, Ch.T., et al. (2017) “The impact of the carbon tax policy on green building strategy”. Journal of Environmental Planning & Management, 2017, 60(8): pp. 1-27.
- UNCTAD (2015), “Information Economy Report 2015: Unlocking the Potential of E-commerce for Developing Countries”, New York and Geneva, p. 89, (https://unctad.org/system/files/official-document/ier2015_en.pdf?fbclid=IwAR1a_eDGCFkZTe0Miti_4tjY-0CDv4K_LtpnmWs3oY7gfi0RPgwoEk7eCR8)
- Yungeng X. (2017), New Media and China’s Social Development / Research Series on the Chinese Dream and China’s Development Path, DOI: 10.1007/978-981-10-3994-2/, Springer, Shanghai, p. 113-114.

*Ընդունված է 3.12.2020
Գրախոսված է 11.2.2021*

ОСОБЕННОСТИ РЕГУЛИРОВАНИЯ ТРАНСГРАНИЧНОЙ ЭЛЕКТРОННОЙ ТОРГОВЛИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ

Пахлян А.А., Агаджанян С.С., Григорян К.Г., Галаян Т.А.

Аннотация. С быстрым проникновением цифровых технологий в сферу экономической деятельности значительная часть розничной торговли перешла в онлайн-сферу, выйдя из рамки контроля налоговых органов и тем самым увеличив теневой сектор экономики.

ВОднако во многих странах электронная торговля цифровыми товарами и услугами подлежит таможенному и налоговому регулированию, и традиционное налоговое администрирование часто сталкивается с трудностями при определении объекта налогообложения, места налогообложения, налоговой базы и других вопросов. Многие страны пытаются самостоятельно разработать такую нормативно-правовую базу до тех пор, пока отсутствуют международные нормы эффективного регулирования.

В статье исследуется зарубежный опыт (ЕС, Китай, Южная Корея, Сингапур, страны ЕАЭС) таможенного и налогового регулирования электронной торговли с целью внедрения наиболее заметных элементов последних в Армении.

Ключевые слова: Трансграничная электронная торговля, налоги, таможенные пошлины, почтовые отправления, беспошлинный ввоз, допустимый лимит.

PECULIARITIES OF CROSS-BORDER ELECTRONIC COMMERCE REGULATION IN THE REPUBLIC OF ARMENIA

Pakhlyan A.A., Aghajanyan S.S., Grigoryan K.H., Ghalayan T.A.

Abstract. With the rapid penetration of digital technologies in the field of economic activity, a significant part of the retail trade has moved to the online sphere, leaving the sphere of control of the tax authorities, adding to the shadow sector of the economy.

However, in many countries, e-commerce with digital goods and services is subject to customs and tax regulation, and traditional tax administration often has difficulties in determining the object of taxation, the place of taxation, the tax base, and other issues. Many countries are trying to develop such regulatory frameworks on their own, as long as there are no unified international norms for effective regulation.

The article examines the experience of foreign (EU, China, South Korea, Singapore, EAEU) countries in the regulation of e-commerce customs and tax with the intention of introducing the most prominent elements of the latter in Armenia.

Keywords: Cross-border e-commerce, taxes, customs duties, postal items, duty-free import, permissible limit.